Մնացորդով բաժանում

Եթե մի թիվը ամբողջությամբ չի բաժանվում մեկ այլ բնական թվի վրա, ապա արդյունքում ստանում ենք թերի քանորդ ու մնացորդ։

Բաժանելի։ բաժանարար=թերի քանորդ(մնացորդ)

Բաժանելի=բաժանարար · թերի քանորդ+մնացորդ

Բաժանարար=(Բաժանելի-մնացորդ):թերի քանորդ

Օրինակ՝ 17:5=3(2մն.), 17-ը բաժանելին է, 5-ը՝ բաժանարար, 3-ը՝ թերի քանորդ, իսկ 2-ը՝ մնացորդ։

Բաժանելին՝ 17=5·3+2

Բաժանարարը՝ 5=(17-2):3

Բաժանման արդյունքում ստացված մնացորդը միշտ փոքր է այն բնական թվից, որի վրա թիվը բաժանել ենք։

Օրինակ՝ բնական թիվը 5-ի բաժանելիս կարող ենք ստանալ 1, 2, 3 կամ 4 մնացորդները։

Օրինակ՝

-	3	4	7						3	4	:	7	=	4	(6մն.)
	2	8	4												
		6մն.		Ստուգում՝					3	4	=	7	·	4	+6

1. Սիրելի սովորողներ, կատարե՛ք մնացորդով բաժանում ու ստուգում։

830:6

930:47

690:8

964:450

810:35

3504:7

290:14

308:18

409:6